

տացաւ ատենադրութեանց տպագրութեան մասին ևս հոգ տանիլ և ժամանակին հասցնել զանոնք:

Ժողովն յետոյ օրակարգն անցնելով, Մայր Դիւանի կողմէ պատրաստեալ ցանկի մը վրայ իւր նախաքննիչ զիւանաց ընտրութիւնը կատարեց քուէարկութեամբ: որոյ արդիւնքն աւասիկ:

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, Գարեգին վարդապետ Թաթարեան, Աղաբէկեան Մարկոս էֆէնտի

ԴԱՍՏԵԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ապտուլահ Գէորգ էֆէնտի, Մամիկոնեան Միքայէլ էֆէնտի, Պէրպէրեան Ռէթէոս

ԿԵԼՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ

Եէմէնիճեան Յակոբ էֆէնտի, Թորգոմեան Պօղոս էֆէնտի, Ղազարոսեան Քրիստոստուր

ՀԱՄԵԱՐԱԿԵԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ճանըմեան Մկրտիչ էֆէնտի, Յովակիմեան Գառնիկ էֆէնտի, Սըմաճեան Կարապետ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Թորոսեան Յովհաննէս էֆէնտի, Պուլղուրեան Ռուբէն էֆէնտի, Օռմանեան Աիշէն

ԻՐԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Մկրեան, Արշակ Յակոբ էֆ. Նորատունկեան Գ. էֆ.

ՆԵԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Արշակունի Յովհ. էֆ. Չերազ Մինաս էֆ. Պոյաճեան Նշան էֆ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Ալաճաճեան Համարձուժ էֆէնտի, Գուրգէն Յակոբ էֆէնտի, Մեղպուրեան Մկրտիչ (Մասիս)

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

ՍԻՒՆԵԱՅ ԲՈՆԱԿՈՒ ԴԻՒԱՆ

Գերազնիւ Կոլլեժսկի Աստեօր Զաքարեա-բէկ Մելիք-Թանգեանցը գալով ամառանոց իւր հայրենիքը՝ իւր բարեպաշտ Տիկնոջ հետ այցելեց մեր նորակառոյց Հոգ. ձխական գպրոցին, Յիշեալ պարոնը և մեծապատիւ Տիկինը անձամբ աշակերտաց հարցեր առաջարկեցին, կարգալ գրել տուին և աշակերտներին յաջող պատասխաններով ու յառաջագիմու-

Թեամբ նոյնպէս և դպրոցի ներքին և արտաքին բարեկարգութեամբ գոհ խնդրեցին դպրոցի ստորագրութեան մատենանը և ստորագրեցին մի հարիւր հինգ բուբլի Գերապնիս պարոնը այնուհետեւ քաջալերեց աշակերտներին՝ իրանց ուսման գործում, վարժապետներին՝ իրանց պարտաւորութեանց ճիշտ կատարման համար. խոստացաւ որ ինքը ևս իւր Տիկնոջ հետ իրանց կարողութեան չափ կօգնեն դպրոցին. և այսպէս յայտնելով իրանց շնորհակալութիւնը գոհ սրտով հեռացան ուսումնարանից:

Հոգաբարձութիւնս առաջին անգամ գրեթէ՝ տեսնելով դէպի իւր դպրոցը այսպիսի մի առատանուէր նուիրաբերութիւն, չըկարողացաւ լռութեան տալ և ընդ գրուանաւ պահել. ուստի Արարատի միջոցաւ շտապումէ իւր խորին շնորհակալութիւնը յայտնել Մեծապատիւ Պ. Զաքարիա Բէկին և իւր բարեպաշտուհի Տիկնոջ Մարիամին. նոյնպէս աւելորդ չի համարում հրաւեր կարգաւ և միւս մեր հայրենակից պատուարժան եղբարց որպէս զի նոքա ևս հետեւեն սոցա բարի օրինակին, չըխնայեն իրանց կարողութեան չափ օգնելու մեր նորակառոյց դպրոցին — նորա գոյութիւնը յարատեւ անելու, որի մէջ պիտի կրթուին շատ հայ մանկտիք ի պարծանս Հայ ազգի և եկեղեցւոյ:

Մեծայոյս ենք, որ մեր ձայնը արձագանք կը գտնի մեր հայրենակցաց մօտ, որոնք ի սրտէ պիտի ուրախ լինին կարգալով մեր այս հրաւերը և կատարելով իրանց պարտքը դէպի դպրոցը, նամանաւանդ հոգւով չափ պիտի ուրախանան, որ վերջապէս լուսաւորութեան լապտերը իրանց հայրենիքում ևս սկսեց նոր ի նորոյ լոյս տալ՝ խաւարից մահուան քնով ընկղմուած ժողովրդին առաջնորդելով դէպի լոյս աշխարհը:

Անգամաք Հոգա- (Մերդաջտն Տէր Գեորգեանց
բարձրագոյն (Խաչատուր Մահտեսի Աղայեանց

10 Յուլի 1884 - 4

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

(ՍԵՆՏԵՐԻ ՅՈՒՆԻՍԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԳԱՂՈՒԹԵՒ).

ՊԱՐԶԱԿԱՆ

Սինոդը ի նկատի ունելով Ղզլարու փոխանորդ Արժ. Ադամ վարդապետի ի 15 ն անցեալ Գեկտեմբերի յայտարարութիւն, որով յիշեալ վարդապետը տկարութեան համար խնդրումէր արձակել իրան պաշտօնից, — որոշեց. Արժ. Ադամ վարդապետին իւր խնդրին համամատարձակել Ղզլարու փոխանորդութեան պաշտօնից՝ տեղը նշանակելով Տփլիսու Ս. Սարգիս վանքի վանահայր Արժ. Գրիգոր վարդապետ Գառնակերեանին, իսկ Արժ. Յովհաննէս վարդապետ Շիրակունուն՝ Ս. Սարգսի վանահայր, վերակացու նուիրակութեան մեղրամոմոց, կառավարիչ աթոռային կալուածոց և անդամ Տփլիսոյ վիճակային Կոնսիստորիոյ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՆՆԻ Ի ՎԱՂԱՐԵԱՊԱՏ.